

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 3/10

15 հունվարի 2013թ.

Քննարկվեց Ա/Ձ Հասմիկ Մարգարյանի դիմումը «ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 23.10.2012թ. թիվ 43/2 որոշմամբ կասեցված վարչական վարույթը վերկսելու վերաբերյալ:

«ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի (այսուհետ նաև Հանձնաժողով) 23.10.2012թ-ի նիստում քննության է առնվել Ա/Ձ Հասմիկ Մարգարյանի 28.09.2012թ-ի դիմումով բերված գանգատը «ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 19.09.2012թ-ի թիվ 1003849 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է թիվ 43/2 որոշումը, որի համաձայն ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» «Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի <ա> ենթակետի դրույթներով, Ա/Ձ Հասմիկ Մարգարյանի գանգատի հիման վրա «ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կասեցվել է:

Դրանից հետո Ա/Ձ Հասմիկ Մարգարյանը Հանձնաժողովին է ներկայացրել դիմում, որում մասնավորապես նշվել է, որ վերացել է կասեցման հիմքը՝ հետաքննության մարմնի որոշմամբ քրեական գործի հարուցումը մերժվել է: Հետևապես Ա/Ձ Հասմիկ Մարգարյանը խնդրում է վերսկսել կասեցված վարչական վարույթը և դրա հետևանքով առաջացած վարչական իրավախախտման գործի քննությունը:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ Ա/Ձ Հասմիկ Մարգարյանի 28.09.2012թ-ի դիմումով «ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 19.09.2012թ-ի թիվ 1003849 ստուգման ակտի դեմ բերված գանգատը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ:

Ստուգման ակտի 9-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ «ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչության 1-ին բաժնի հետաքննիչի 29.06.12թ. ստուգում նշանակելու մասին որոշմամբ պարզվել է, որ Ա/Ձ Հասմիկ Մարգարյանը 2012թ. ապրիլ-հունիս ամիսներին ք.Երևան, Խորենացի 33 հասցեում իրականացրել է վարսավիրական գործունեություն 2 աշխատատեղով, սակայն հարկային տեսչություն է ներկայացրել ձև 1 հայտարարությունը 1 աշխատատեղի համար և կատարել է համապատասխան վճարումը:

<Արտոնագրային վճարների մասին> «Օրենքի 9-րդ հոդվածի համաձայն, գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի համար արտոնագրում նշված արտոնագրային վճարի ելակետային տվյալի մեծությունը հարկային մարմնի կողմից փաստացի արձանագրված ելակետային տվյալի մեծությունից պակաս լինելու դեպքում արտոնագրային վճար վճարողից գանձվում է տվյալ ժամանակաշրջանի համար պակաս վճարված արտոնագրային վճարը 63000 դրամ /ապրիլ-հունիս/, ինչպես նաև տուգանք արտոնագրային վճարի 50%-ի չափով՝ գումարով 31500 դրամ:

Արդյունքում հիմք ընդունելով «Հարկերի մասին» «Օրենքի 23-րդ և 25-րդ հոդվածների դրույթներն արտոնագրային վճարի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 109.305 դրամ:

Հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» «Օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն, անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Տվյալ դեպքում Ա/Ձ Հասմիկ Մարգարյանի նկատմամբ ընդունվել է ոչ բարենպաստ վարչական ակտ, հետևապես դրանում տեղ գտած տեղեկությունների ապացուցման

պարտականությունը կրում է վարչական մարմինը, ի դեմս ստուգման իրականացրած պաշտոնատար անձանց:

Իր հերթին <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի համաձայն, ստուգման ակտում պետք է նշվեն ստուգմամբ բացահայտված խախտումները, խախտումների նկարագրությունը, խախտման ժամկետը, իսկ <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի համաձայն, վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմնին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում:

Սույն գործին առնչվող նյութերի ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրահանգման, որ առկա չեն բավարար ապացույցներ, որոնք կհիմնավորեն Ա/Ձ Հասմիկ Մարգարյանի կողմից 2012թ. ապրիլ-հունիս ամիսներին ք.Երևան, Խորենացի 33 հասցեում 2 աշխատատեղով վարսավիրական գործունեություն իրականացնելու փաստը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Հասմիկ Մարգարյանը ժխտում է ստուգման ակտով արձանագրված խախտումն իր կողմից կատարված լինելու հանգամանքը, Հանձնաժողովը գտնում է, որ իրականացված ստուգմամբ, ըստ էության, չի հիմնավորվել Ա/Ձ Հասմիկ Մարգարյանի կողմից <Արտոնագրային վճարների մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջները խախտվելու փաստը:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.>:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ կր. թիվ 1003849 19.09.2012թ-ի թիվ 1003849 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ

S.ԲԱՐՍԵՂՅԱՆ

